

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՐԱՄԱՆ**

ք. Երևան,

« 23 » դեկտեմբերի 2009թ. No 4047-Ա

«Մաքսային հսկողության ռիսկերի պրոֆիլների նախագծերի մշակման, մաքսային հսկողության ժամանակ ռիսկերի պրոֆիլների կիրառման, դրանց ակտիվացման և դադարեցման մասին» հրահանգը գործողության մեջ դնելու մասին

Ռիսկերի պրոֆիլների վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ներդրման նպատակով

Հրամայում եմ.

1. Հաստատել «Մաքսային հսկողության ռիսկերի պրոֆիլների նախագծերի մշակման, մաքսային հսկողության ժամանակ ռիսկերի պրոֆիլների կիրառման, դրանց ակտիվացման և դադարեցման մասին» հրահանգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Հրահանգով նախատեսված մաքսային հսկողության ռիսկերի կառավարման փազորված ստորաբաժանում (ՌԿՍ) սահմանել ՀՀ ՊԵԿ Մաքսային վիճակագրության, վերլուծության և ռիսկերի կառավարման վարչությունը:

3. ՀՀ ՊԵԿ վերադաս մարմնի ստորաբաժանումների ղեկավարներին, մաքսատների և մաքսակետերի պետերին՝

ա) ապահովել հրահանգով նախատեսված տեղեկությունների տրամադրումը ՀՀ ՊԵԿ Մաքսային վիճակագրության, վերլուծության և ռիսկերի կառավարման վարչությանը,

բ) նշանակել պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են ստանալ և ներկայացնել հրահանգով նախատեսված տեղեկությունները: Նշված անձանց ցանկը ներկայացնել ՀՀ ՊԵԿ Մաքսային վիճակագրության, վերլուծության և ռիսկերի կառավարման վարչություն:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը՝

ա/ ապահովել ՌԿՍ հասանելիությունը TWM, «Հարկատու-2» և

«Հարկատու-3» տեղեկատվական համակարգերին և առկա հաշվետվությունների
Էլեկտրոնային բազաներին,

բ/ մաքսային ձևակերպման ավտոմատ համակարգի ընտրողականության
մոդուլում մուտքագրել չափանիշներ, որոնք անհրաժեշտ են սույն հրամանով
հաստատված հրահանգով նախատեսված ռիսկի պրոֆիլների կիրառման համար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի
2009թ. դեկտեմբերի 23-ի N0
4047-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՀԱՆԳ

Մաքսային հսկողության ռիսկերի պրոֆիլների մշակման, մաքսային հսկողության ժամանակ ռիսկերի պրոֆիլների կիրառման, դրանց ակտիվացման և դադարեցման մասին:

ԵՐԵՎԱՆ 2009թ.

Բովանդակություն

I. Ընդհանուր դրույթներ	3
II. Հրահանգում օգտագործվող հիմնական հասկացությունները	4
III. Անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման կարգը	5
IV. ՌԿԱ կողմից ստացված տեղեկատվության ամփոփումը և տեղեկատվական բազայի ստեղծումը	6
V. ՌԿՍ կողմից ռիսկերի բացահայտման և ռիսկի աստիճանի որոշման մեթոդիկան	7
VI. Ռիսկի աստիճանը, ռիսկի պրոֆիլների տեսակները և դրանց կազմումը	9
VII. Ռիսկերի պրոֆիլների տեղայնացումը և դրանց կիրառումը մաքսային հսկողության ժամանակ	12
VIII. Ռիսկերի պրոֆիլների կիրառման վերաբերյալ հաշվետվությունը	12

Հավելվածներ

1. Ռիսկի պրոֆիլի նախագծերի կազմման տիպային կանոնները (հավելված 1)	14
2. Ռիսկերի կառավարման համակարգում տեղեկատվության մշակման և տրամադրման տիպային սխեման (հավելված 2)	16
3. Ռիսկի պրոֆիլի նախագիծ (հավելված 3)	17
4. Ռիսկի աստիճանի գնահատման (ռիսկայնության գործակիցների հաշվարկման) կարգը (հավելված 4)	18
5. Ռիսկի պրոֆիլ (հավելված 5)	23
6. Ռիսկի պրոֆիլների կիրառման միջոցառումների դասակարգիչը (հավելված 6)	24

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Հրահանգը մշակվել է ՀՀ մաքսային օրենսդրությանը համապատասխան: Սույն հրահանգը տարածվում է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց (այսուհետև հրահանգի տեքստում՝ անձիք) կողմից կատարված գործարքների և իրականացված ձևակերպումների վրա:

1.2 Հրահանգը սահմանում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները.

ա) ռիսկերի պրոֆիլների նախագծերի մշակման ժամանակ,

բ) ռիսկերի պրոֆիլների նախագծերի քննարկման և ռիսկերի պրոֆիլների հաստատման ժամանակ,

գ) ռիսկերի պրոֆիլներին համապատասխան ռիսկերի նվազեցման միջոցառումների կիրառման ժամանակ,

դ) ռիսկերի պրոֆիլների ակտիվացման և դադարեցման ժամանակ,

ե) ռիսկերի պրոֆիլների մշակման, հաստատման և ըստ նշանակության ուղարկելու ժամանակ:

1.3 Ռիսկերի պրոֆիլների նախագծերի մշակման աշխատանքների համակարգումը, մաքսային հսկողության ժամանակ ռիսկերի պրոֆիլների կիրառման, դրանց ակտիվացման և դադարեցման աշխատանքները կատարում է ՀՀ վերադաս մաքսային մարմնի մաքսային հսկողության ռիսկերի կառավարման լիազորված ստորաբաժանումը (ՌԿՍ):

Ռիսկերի պրոֆիլները ուժի մեջ են մտնում ՀՀ ՊԵԿ նախագահի կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձի կողմից հաստատելու պահից և ենթակա են կատարման ՀՀ ՊԵԿ բոլոր ստորաբաժանումների կողմից:

Ռիսկերի պրոֆիլներով սահմանված միջոցառումների իրականացումն ապահովում են՝

ա) ՀՀ վերադաս մաքսային մարմնի համապատասխան ստորաբաժանումները,

բ) մաքսատներում և մաքսակետերում՝ մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության գործառույթներ իրականացնող բաժինները,

Ռիսկերի բացահայտմանը և վերլուծությանը մասնակցում են մաքսային մարմինների այն պաշտոնատար անձինք, որոնք իրականացնում են.

ա) օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների և արգելքների հսկողությունը,

բ) ԱՏԳԱԱ-ին համապատասխան ապրանքների դասակարգման և ապրանքների ծագման երկրների որոշումը,

- գ) մտավոր սեփականության իրավունքի պահպանման հսկողությունը,
 - դ) ռիսկերի կառավարման համակարգի և (կամ) մաքսային ընթացակարգերի ու մաքսային հսկողության կազմակերպումը, կոորդինացումը և կատարումը,
 - ե) մաքսային արժեքի որոշման հսկողությունը,
 - զ) մաքսային վճարների հաշվարկման և գանձման հսկողությունը,
 - է) արժույթային հսկողությունը,
 - ը) տարանցիկ փոխադրման, ինչպես նաև մեկ մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նկատմամբ հսկողությունը,
 - թ) նսխաբացթողումային և հետբացթողումային հսկողությունը,
 - ժ) մաքսային վիճակագրության վարումը,
 - ի) հետաքննություն և նախաքննություն,
 - լ) մաքսային գործի հետ կապված լիցենզավորում, մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում իրականացնողները:
- 1.4 Ռիսկերի կառավարման համակարգի հիմնական խնդիրները,
- ա) միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում՝ ռիսկերի կառավարման համակարգի գործառույթների իրականացման համար,
 - բ) ռիսկերի բացահայտման համապատասխան մեթոդիկայի սահմանում,
 - գ) հնարավոր և արդեն ի հայտ եկած ռիսկերի հայտնաբերում,
 - դ) մաքսային օրենսդրության խախտմանը նպաստող պայմանների բացահայտում,
 - ե) հնարավոր ռիսկերի առաջացման հետևանքով հավանական վնասների գնահատում,
 - զ) ռիսկերի կանխարգելման կամ դրանց նվազեցման հնարավորությունների բացահայտում,
 - է) իրականացվող գործողությունների արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում,
 - ը) ռիսկերի նվազեցման համար համապատասխան միջոցառումների մշակում և դրանց կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացում,
 - թ) համապատասխան տեղեկատվության հավաքագրում և վերլուծում:
- 1.5 Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները,
- ա) նպատակաուղղվածության սկզբունք,
 - բ) տեղեկատվության միասնականության ապահովման սկզբունք,

գ) օրհանականության սկզբունք,

դ) ռիսկերի կառավարման միասնականության սկզբունք:

1.6 Ռիսկերի կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ մասերից,

ա) համապատասխան հայեցակարգի կամ հրահանգի մշակում,

բ) ռիսկերի որոշում,

գ) ռիսկերի վերլուծում /գնահատում/,

դ) ռիսկերի հասցեավորում,

ե) ռիսկերի կիրառման մոնիտորինգ,

զ) ամբողջ գործընթացի ուսումնասիրություն՝ մաքսային օրենսդրության պահպանման աստիճանի բացահայտման նպատակով:

II. Հրահանգում օգտագործվող հիմնական հասկացությունները

2.1. Մաքսային հսկողության ռիսկերի կառավարման իմաստով.

ա/ **ռիսկ է** համարվում ՀՀ մաքսային օրենսդրության պահանջները չկատարելու հավանականությունը,

բ/ **ռիսկի պրոֆիլ է** համարվում ռիսկի ոլորտի վերաբերյալ տեղեկությունների, ռիսկի բաղադրիչների, ինչպես նաև ռիսկը նվազագույնի հասցնելու միջոցառումների ամբողջությունը,

գ/ **ռիսկը նվազագույնի հասցնելու միջոցառումներ** են համարվում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային օրենսդրության խախտումների բացահայտմանը և կանխարգելմանը ուղղված որոշակի գործողությունները,

դ/ **ռիսկի պրոֆիլի նախագիծ** է համարվում ստացված տեղեկությունների հիման վրա ՌԿՍ կողմից սույն հրահանգով սահմանված կարգով կազմած փաստաթղթերի, տեղեկանքների և հաշվարկների ամփոփ փաթեթը և առաջարկվող միջոցառումների ցանկը,

ե/ **ռիսկերի բացահայտման նպատակային մեթոդիկան** դա տեղեկատվության վերլուծության կարգն է,

զ/ **ռիսկի շրջանակ** է համարվում այն մաքսային ընթացակարգերը կամ գործընթացները, որոնց նկատմամբ անհրաժեշտ է կիրառել մաքսային հսկողության հատուկ մոտեցում,

է/ **ռիսկի գնահատում** է համարվում ռիսկի ի հայտ գալու և դրա հետևանքով մաքսային օրենսդրության խախտման հնարավոր հետևանքների որոշումը,

ը/ **ռիսկի ցուցանիշներ** են համարվում նախապես որոշված այն չափանիշները, որոնցից շեղման դեպքում կատարվում է մաքսային հսկողության ընտրողականություն,

թ/ **նիսկի կառավարում** է համարվում մի շարք միջոցառումների մշակման և դրանց իրականացման նպատակով պարբերաբար իրականացվող աշխատանքները, որոնք իրականացվում են նիսկերի կանխարգելման կամ դրանց նվազեցման նպատակով,

ժ/ **նիսկի քանակային գնահատականը** դա նիսկի հավանական հետևանքների քանակային արտահայտությունն է,

ժ/ա **նիսկի վերլուծություն** է համարվում որոշակի նիսկերի ի հայտ գալու հավանականությունը բացահայտելու և դրա հետևանքերը որոշելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվության պարբերաբար մշակումը,

ժ/բ **նիսկի պրոֆիլի ակտիվացում** է համարվում գործող նիսկի պրոֆիլների, նիսկի ոլորտի, նիսկերի նվազագույնի հասցնելու միջոցառումների ցանկի փոփոխությունը, ինչպես նաև նիսկի պրոֆիլների գործողության ժամկետի երկարացումը,

ժ/գ **նիսկի աստիճանը** դա նիսկի քանակային գնահատման արդյունքն է:

III. Անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման կարգը

Մաքսային հսկողության համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման նպատակով ՀՀ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումները, մաքսատները և մաքսային կետերը տեղեկություն են ներկայացնում մաքսային հսկողության նիսկերի կառավարման լիազորված ստորաբաժանում (ՌԿՍ) հետագա մշակման և նիսկերի նախագծերի կազմման նպատակով:

ՌԿՍ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները.

ա) ՀՀ վերադաս մաքսային մարմնի մաքսանենգության դեմ պայքարի լիազորված ստորաբաժանան ղեկավարը և նախաբացթողումային հսկողության լիազորված ստորաբաժանման ղեկավարը յուրաքանչյուր մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրության պատճեն՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

բ) ՀՀ ՊԵԿ մաքսային մասով հետաքննության ստորաբաժանման ղեկավարը յուրաքանչյուր կայացված որոշման պատճեն (վարչական պատասխանատվության կամ կարճման)՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

գ) ՀՀ վերադաս մաքսային մարմնի մաքսային հսկողության ստորաբաժանման ղեկավարը յուրաքանչյուր մերժման մասին գրության (եզրակացության) պատճեն, մերժման պատճառների նկարագրով՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

դ) ՀՀ վերադաս մաքսային մարմնի հետբացթողումային հսկողության ստորաբաժանման ղեկավարը կատարված ստուգման արդյունքների վերաբերյալ ակտի և մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրության պատճեն՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

ե) ՀՀ ՊԵԿ մաքսային մասով քննչական ստորաբաժանման ղեկավարը քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճեն՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

զ) ՀՀ ՊԵԿ մաքսային մասով ներքին դիտարկումների և վերահսկողության ստորաբաժանման ղեկավարը կատարված ստուգումների արդյունքներով կազմված ակտերի պատճեն և իրականացված այն ծառայողական քննությունների ամփոփ նյութերի պատճեն, որոնց հիման վրա մաքսային ծառայողները ենթարկվել են պատասխանատվության՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

է) ՀՀ ՊԵԿ բոլոր ստորաբաժանումներում օտարերկրյա պետությունների գործընկերներից, ինչպես նաև ՀՀ պետական այլ մարմիններից ստացվող մաքսային օրենսդրության խախտումներին առնչվող հարցումների և դրանց պատասխանների պատճեն՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

ը) Վերադաս մաքսային մարմնի մաքսատների և մաքսային կետերի պետերը կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշման պատճեն՝ տասնօրյա կտրվածքով,

թ) ՀՀ ՊԵԿ մաքսային գործի հետ կապված լիցենզավորող հանձնաժողովը, մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում իրականացնող հանձնաժողովը և մտավոր սեփականության օբյեկտի գրանցում իրականացնող ստորաբաժանումները տրված լիցենզիաների, վկայականների պատճեն՝ տրամադրմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև գրանցամատյաններում կատարված գրառումների քաղվածքները՝ գրանցելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՌԿՍ-ն տեղեկատվական բազայի ստեղծման նպատակով օգտագործում է նաև Ազգային վիճակագրության վառայության և այլ նախարարությունների ու պետական կառավարման մարմինների կողմից հրապարակված տեղեկատվությունը:

ՌԿՍ կողմից ստացված ցանկացած տեղեկություն հանդիսանում է ծառայողական գաղտնիք և կարող է օգտագործվել միայն ռիսկերի պրոֆիլների կազմման համար: Ստացված տեղեկությունների գաղտնիության պահպանման համար պատասխանատու է ՌԿՍ ստորաբաժանման տեղեկությունները ստացող պաշտոնատար անձը և բոլոր այն անձինք, ովքեր մուտք են ունենալու տվյալների բազա:

IV. ՌԿՍ կողմից ստացված տեղեկատվության ամփոփումը և տեղեկատվական բազայի ստեղծումը

ՌԿՍ ստորաբաժանումը ստացված տեղեկատվությունը ամփոփում է մեկ սերվերի վրա և ստեղծում է տվյալների միասնական օգտագործելու հնարավորություն: Տեղեկատվության համախմբման արդյունքում ստեղծվում է միասնական բազա: Սույն հրահանգով սահմանված տեղեկանքները, ռիսկի

պրոֆիլները և ՀՀ ՊԵԿ ստորաբաժանումների ղեկավարներին պարտադիր ներկայացվելիք տեղեկությունները տեղայնացվում են մշակված տեղեկանքների ձևով, ՊԵԿ ցանցում, և օգտագործողներին հասանելի են դառնում ծածկագրի միջոցով: Նշված բազայի ստեղծման նպատակով ստացվող տեղեկատվությունը նույնականացվում է ստեղծելով նույն բացվածքի ֆայլեր: Այլ պետական մարմիններից (այդ թվում՝ վիճակագրական պետական մարմինների հրապարակած տեղեկությունները, իրավապահ մարմինների կողմից հետախուզման մեջ գտնվող անձանց և գույքի վերաբերյալ տեղեկությունները և այլն) ստացված տեղեկությունները նույնպես մշակվում են և բերվում մեկ միասնական տեսքի՝ հետագայում ըստ անհրաժեշտության օգտագործելու նպատակով:

Ստացված տեղեկատվությունը դասակարգվում է երկու դասի՝ բաց և փակ:

Բաց տեղեկատվությունը կարող է տեղադրվել ՊԵԿ տեղեկատվական ցանցում և հասանելի դառնալ ՊԵԿ նախագահի կողմից համապատասխան տեղեկատվություն ստանալու թույլտվություն ունեցող պաշտոնատար անձանց համար:

Փակ տեղեկատվությունը համարվում է ծառայողական գաղտնիք և ենթակա չէ հրապարակման:

Ռիսկի պրոֆիլի նախագծերի կազմման տիպային կանոնները, ռիսկերի կառավարման համակարգում տեղեկատվության մշակման և տրամադրման տիպային սխեման և մաքսային հսկողության ռիսկի պրոֆիլի նախագծի օրինակելի ձևը բերված են սույն հրահանգի 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածներում:

V. ՌԿՍ կողմից ռիսկերի բացահայտման և ռիսկի աստիճանի որոշման մեթոդիկան:

ՌԿՍ կողմից յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 25-ը կազմվում են ապրանքային խմբերի և ԱՏԳ մասնակիցների կատարած գործարքների համեմատական ցուցանիշների տեղեկատվական աղյուսակներ: Աղյուսակներում տեղեկանքների տեսքով բերվում են այնպիսի ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու շեղումները նախորդ տարիների/ամիսների նկատմամբ:

Առանձին ապրանքային խմբերի գծով կազմվող աղյուսակները հնարավորություն են ընձեռում բացահայտելու այդ խմբի ապրանքների ՀՀ մաքսային սահմանով տեղափոխման ցուցանիշների փոփոխությունները որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Ցուցանիշների թվին կարող են դասվել տփալ ամսում/տարում և դրան նախորդ երկու ամիսների/տարիների ընթացքում՝ ձևակերպված մաքսային արժեքները, հաշիվ-ապրանքագրային արժեքները, ապրանքների շուկայական արժեքները, ապրանքների քաշերը (բրուտտո, նետտո), քանակները ըստ չափման միավորների, ապրանքի ծագման երկիրը, արտահան ման երկիրը, առևտուր անող երկիրը, արտահանող

կազմակերպությունները և այլն: ՌԿՍ-ի կողմից նաև պարբերաբար ընտրանքային ուսումնասիրություններ են իրականացվում ներքին շուկայում առկա ներմուծված ապրանքների, դրանց իրացման գների, մոդելների, մակնիշների և այլ ցուցանիշների ֆիքսման նպատակով: ՌԿՍ-ն պարբերաբար ուսումնասիրություններ է իրականացնում նաև մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց մոտ:

Նշված ուսումնասիրությունների արդյունքները օգտագործվում են համեմատական ցուցանիշների աղյուսակներ կազմելիս:

Համեմատական ցուցանիշներից շեղումներ ունեցող անձանց համար, որոնց ՀՀ մաքսային սահմանով տեղափոխման քանակական կամ արժեքային միջին ցուցանիշներից շեղումները կազմում են 20 տոկոս և ավելի, կամ որոնք թույլ են տվել մաքսային կանոնների, լիցենզավորման պահանջների խախտումներ, ՌԿՍ ստորաբաժանումը իրականացնում է ռիսկի աստիճանի գնահատում և կազմում է ռիսկի պրոֆիլի նախագիծ:

Ռիսկի պրոֆիլի նախագծի կազմման նպատակով ՌԿՍ պատասխանատու անձը բացահայտված ռիսկային ոլորտների համար կազմում է դրան առընչվող, ինչպես նաև խախտում/շեղում թույլ տված անձանց գծով տեղեկատվություն պարունակող տեղեկանքներ, որոնց մեջ արտացոլվում են.

ա) տվյալ անձանց կողմից վերջին 3 տարիների ընթացքում կատարված մաքսային գործարքները՝ ըստ ապրանքային խմբերի (տեղեկանք 1),

բ) նույն անձանց հիմնադրի (հիմնադիրների) և (կամ) անձանց փոխկապակցված անձանց կողմից վերջին 3 տարիների ընթացքում կատարված մաքսային գործարքները՝ ըստ ապրանքային խմբերի (տեղեկանք 2),

գ) տվյալ անձանց ապրանքները տեղափոխող տրանսպորտային միջոցների վերջին մեկ ամսվա ընթացքում (ըստ օրերի) շարժը այն հսկողության տարածքներում, որտեղ հայտնաբերվել են խախտումներ, մաքսային հսկողությունից թաքցված ապրանքներ կամ այլ շեղումներ, որոնք հիմք են հանդիսացել ռիսկի պրոֆիլի նախագծի կազմման համար (տեղեկանք 3),

դ) խախտման օբյեկտ հանդիսացող ապրանքների գծով վերջին 3 տարիների ընթացքում կազմված ռիսկերի պրոֆիլների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը (տեղեկանք 4),

ե) ուսումնասիրության պահին նախորդող 3 տարիների ընթացքում ռիսկի նախագծով նախանշված անձանց կողմից շեղումների, խախտումների կամ մաքսային կանոնների խախտումների արձանագրված դեպքերի վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանք 5),

զ) ապրանքներ ուղարկողի և (կամ) փոխադրողի կողմից առաքումների և փոխադրումների ու նրանց կողմից մաքսային օրենսդրության պահպանման վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանք 6):

Անձանց գծով ռիսկի պրոֆիլի նախագծի կազմման ժամանակ, սույն գլխով

նախատեսված տեղեկանքները մշակվում են խախտման/շեղման հայտնաբերման պահին ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման համար ընտրված մաքսային ռեժիմի շրջանակներում: Եթե ռիսկի պրոֆիլի նախագիծը կազմվում է ապրանքների խմբի գծով, ապա տեղեկանքները մշակվում են այդ ապրանքային խմբի գծով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում իրականացնող առաջին տասը խոշոր գործարք իրականացնող անձանց յուրաքանչյուրի համար՝ հետագայում համեմատականներ կատարելու համար:

Մշակված տեղեկանքների հիման վրա կատարվում է ռիսկի աստիճանի գնահատում (ռիսկայնության գործակցի հաշվարկում) 4-րդ հավելվածում բերված կարգով:

Շեղումների վերաբերյալ առանձին տվյալները ՌԿՍ-ն փոխանցում է ՀՀ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումներին հետագա աշխատանքներում հաշվի առնելու նպատակով: Լիցենզավորված անձանց մոտ հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ՀՀ ՊԵԿ մաքսային գործի հետ կապված լիցենզավորման հանձնաժողովին: Ուսումնասիրվող ժամանակահատվածին նախորդող ժամանակների համար հայտնաբերված խախտումների/շեղումների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է հետբացթողումային հսկողություն իրականացնող ստորաբաժանմանը:

Տեղեկությունների մշակման արդյունքում ռիսկային համարված գործարքների և ապրանքների գծով խախտումների դեպքերի մասին տեղեկացվում է ՀՀ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումներին:

VI Ռիսկի աստիճանը, ռիսկի պրոֆիլների տեսակները և դրանց կազմումը

Վերադաս մաքսային մարմնի ՌԿՍ պաշտոնատար անձը ռիսկի նախագծի հիման վրա յուրաքանչյուր դեպքի համար կազմում է ռիսկի պրոֆիլ: Ռիսկի պրոֆիլի օրինակելի ձևը բերված է սույն հրահանգի 5-րդ հավելվածում:

Ռիսկի պրոֆիլի կազմման փուլում ՌԿՍ կողմից կարող է ստացված տեղեկություններից առանձնացվել մի մասը և ձևավորվել նոր ռիսկի պրոֆիլի նախագիծ՝ փոխկապակցված անձանց կամ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների այլ տեսակների համար:

Ռիսկի պրոֆիլի միջոցառումների իրականացումը պարտադիր է ՀՀ ՊԵԿ վերադաս մարմնի և այլ ստորաբաժանումների համար: Ռիսկերի պրոֆիլների միջոցառումների դասակարգիչը բերված է 6- րդ հավելվածում:

Ռիսկի գնահատականի հիման վրա, դրանք դասակարգվում են հինգ աստիճանի՝

Ընդհանուր հսկողության ռիսկի պրոֆիլ: Նշված պրոֆիլի շրջանակներում

ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով կատարվում է պրոֆիլով սահմանված ապրանքների հսկողության կարմիր ուղու ընտրում ընդհանուր քանակի 20 տոկոսի և դեղին ուղի 80 տոկոսի չափով՝ 10 օր ժամկետով: Եթե 10 օրյա ժամկետում չի ձևակերպվում այդ ապրանքներից կամ ձևակերպվում են 10 միլիոն դրամը չգերազանցող մաքսային արժեքով ապրանքներ, ապա նշանակված ժամկետը երկարաձգվում է 30 օրով: Եթե պրոֆիլը կիրառվում է անձանց նկատմամբ, ապա կարմիր ուղին տարածվում է անձանց կողմից կատարվող բոլոր գործարքների վրա: Մեկ անգամ երկարաձգելու ժամկետի ավարտից հետո հանձնարարական ստացած ստորաբաժանումները ՌԿՍ են ներկայացնում ռիսկի պրոֆիլի կիրառման արդյունքները: Ռիսկի պրոֆիլը հաստատող պաշտոնատար անձը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

- Ռիսկի պրոֆիլը հանել հսկողությունից,
- Բարձրացնել ռիսկի աստիճանը կամ կիրառել այլ ռիսկի պրոֆիլ:

Ընտրանքային հսկողության ռիսկի պրոֆիլ: Նշված պրոֆիլի շրջանակներում ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով կատարվում է պրոֆիլով սահմանված ապրանքների հսկողության կարմիր ուղու ընտրում ընդհանուր քանակի 40 տոկոսի և դեղին ուղի 60 տոկոսի չափով՝ 10 օր ժամկետով: Եթե 10 օրյա ժամկետում չի ձևակերպվում այդ ապրանքներից կամ ձևակերպվում են մինչև 20 միլիոն դրամ մաքսային արժեքով ապրանքներ, ապա նշանակված ժամկետը երկարաձգվում է 30 օրով: Եթե պրոֆիլը կիրառվում է անձանց նկատմամբ ապա կարմիր ուղին տարածվում է անձանց կողմից կատարվող բոլոր գործարքների վրա: Մեկ անգամ երկարաձգելու ժամկետի ավարտից հետո հանձնարարական ստացած ստորաբաժանումները ՌԿՍ են ներկայացնում ռիսկի պրոֆիլի կիրառման արդյունքները: Ռիսկի պրոֆիլը հաստատող պաշտոնատար անձը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

- Իջեցնել ռիսկի պրոֆիլի աստիճանը,
- Լրացուցիչ երկարաձգել ռիսկի պրոֆիլի կիրառումը՝ մինչև 50օր ժամկետով,

- Բարձրացնել ռիսկի աստիճանը կամ կիրառել այլ ռիսկի պրոֆիլ:

Անընդհատ հսկողության ռիսկի պրոֆիլ: Նշված պրոֆիլի շրջանակներում ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով կատարվում է պրոֆիլով սահմանված ապրանքների հսկողության կարմիր ուղու ընտրում ընդհանուր քանակի 60 տոկոսի և դեղին ուղի 40 տոկոսի չափով՝ 10 օր ժամկետով: Եթե 10 օրյա ժամկետում չի ձևակերպվում այդ ապրանքներից կամ ձևակերպվում են մինչև 30 միլիոն դրամ մաքսային արժեքով ապրանքներ, ապա նշանակված ժամկետը երկարաձգվում է 30 օրով: Եթե պրոֆիլը կիրառվում է անձանց նկատմամբ, ապա կարմիր ուղին տարածվում է անձանց կատարվող բոլոր գործարքների վրա: Ռիսկի պրոֆիլի գործողության ընթացքում հանձնարարություն է տրվում նաև մաքսային մարմնի ներքին դիտարկումների

ստորաբաժանմանը հսկողության տակ վեցնելու նշված պրոֆիլի կատարումը: Մեկ անգամ երկարաձգելու ժամկետի ավարտից հետո հանձնարարական ստացած ստորաբաժանումները ՌԿՍ են ներկայացնում ռիսկի պրոֆիլի կիրառման արդյունքները: Ռիսկի պրոֆիլը հաստատող պաշտոնատար անձը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

- Իջեցնել ռիսկի պրոֆիլի աստիճանը,
- Լրացուցիչ երկարաձգել ռիսկի պրոֆիլի կիրառումը՝ մինչև 50օր ժամկետով,
- Բարձրացնել ռիսկի աստիճանը կիրառել այլ ռիսկի պրոֆիլ,
- Ներգրավել այլ ստորաբաժանումներ ռիսկի պրոֆիլի հսկողության ընթացքում:

Խիստ հսկողության ռիսկի պրոֆիլ: Նշված պրոֆիլի շրջանակներում ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով կատարվում է պրոֆիլով սահմանված ապրանքների հսկողության կարմիր ուղու ընտրում ընդհանուր քանակի 80 տոկոսի և դեղին ուղի 20 տոկոսի չափով՝ 10 օր ժամկետով: Եթե 10 օրյա ժամկետում չի ձևակերպվում այդ ապրանքներից կամ ձևակերպվում են մինչև 40 միլիոն դրամ մաքսային արժեքով ապրանքներ, ապա նշանակված ժամկետը երկարաձգվում է 30 օրով: Եթե պրոֆիլը կիրառվում է անձանց նկատմամբ ապա կարմիր ուղին տարածվում է անձանց կողմից կատարվող բոլոր գործարքների վրա: Ռիսկի պրոֆիլի գործողության ընթացքում հանձնարարություն է տրվում նաև մաքսային մարմնի ներքին դիտարկումների, մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության, մաքսային հսկողության ստորաբաժանումներին և հատուկ բաժնին հսկողության տակ վեցնելու նշված պրոֆիլի կատարումը: Մեկ անգամ երկարաձգելու ժամկետի ավարտից հետո հանձնարարական ստացած ստորաբաժանումները ՌԿՍ են ներկայացնում ռիսկի պրոֆիլի կիրառման արդյունքները: Ռիսկի պրոֆիլը հաստատող պաշտոնատար անձը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը,

- Իջեցնել ռիսկի պրոֆիլի աստիճանը,
- Լրացուցիչ երկարաձգել ռիսկի պրոֆիլի կիրառումը՝ մինչև 50օր ժամկետով,
- Բարձրացնել ռիսկի աստիճանը կամ կիրառել այլ ռիսկի պրոֆիլ,
- Ներգրավել այլ ստորաբաժանումներ ռիսկի պրոֆիլի հսկողության համար:

Վրանգավոր ռիսկի պրոֆիլ: Նշված պրոֆիլի շրջանակներում ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով կատարվում է պրոֆիլով սահմանված ապրանքների հսկողության կարմիր ուղու ընտրում ընդհանուր քանակի 100 տոկոսի չափով՝ 10 օր ժամկետով: Եթե 10 օրյա ժամկետում չի ձևակերպվում այդ ապրանքներից կամ ձևակերպվում են մինչև 50 միլիոն դրամ մաքսային արժեքով ապրանքներ, ապա նշանակված ժամկետը երկարաձգվում է մինչև 30 օր

ժամկետով: ժամկետի Երկարաձգման ընթացքում ընտրողականությունը կատարվում է կարմիր ուղու կիրառումով բոլոր բեռների համար: Եթե պրոֆիլը կիրառվում է անձանց նկատմամբ ապա կարմիր ուղին տարածվում է անձանց կողմից կատարվող բոլոր գործարքների վրա: Ռիսկի պրոֆիլի գործողության ընթացքում հանձնարարություն է տրվում Մաքսային մարմնի ներքին դիտարկումների, մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության, մաքսային հսկողության, հետբացթողումային հսկողության ստորաբաժանումներին, ՊԵԿ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանմանը և հատուկ բաժնին հսկողության տակ վեցնելու նշված պրոֆիլի կատարումը: Մեկ անգամ երկարաձգելու ժամկետի ավարտից հետո ռիսկի պրոֆիլի բոլոր պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարները Մաքսային մարմնի ղեկավարին են ներկայացնում ռիսկի պրոֆիլի կիրառման արդյունքները: Մաքսային մարմնի ղեկավարը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- Իջեցնել ռիսկի պրոֆիլի աստիճանը,
- Լրացուցիչ երկարաձգել ռիսկի պրոֆիլի կիրառումը՝ մինչև 50օր ժամկետով,

- Ներգրավել ՀՀ ՊԵԿ այլ ստորաբաժանումներ ռիսկի պրոֆիլի հսկողության համար:

Վտանգավոր ռիսկի պրոֆիլի աստիճանի փոփոխությունը կարող է իրականացվել միայն հաշվի առնելով ՀՀ ՊԵԿ Մաքսային մարմնի ներքին դիտարկումների, Նախաբացթողումային հսկողության, Մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության ստորաբաժանումների առաջարկությունները:

Գաղտնի ռիսկի պրոֆիլ - առանձնահատուկ դեպքերում ՀՀ ՊԵԿ նախագահի հանձնարարությամբ առանձին գործողությունների և գործարքների նկատմամբ կարող են իրականացվել խիստ հսկողության միջոցառումներ, վերահսկելի մատակարարումներ և այլն: Տվյալ դեպքում ռիսկի պրոֆիլով իրականացվող միջոցառումները հսկվում են ՀՀ ՊԵԿ հատուկ բաժնի կողմից և բոլոր ստորաբաժանումները պարտավոր են աջակցել իրականացվող միջոցառումներին: Գաղտնի ռիսկի պրոֆիլի մանրամասնությունների հրապարակումն արգելվում է:

Ավտոմատացված ռիսկի պրոֆիլ - դա մաքսային ձևակերպումների ավտոմատ համակարգի ընտրողականության մոդուլում կիրառվող ռիսկի չափանիշներն են: Ավտոմատացված ռիսկի պրոֆիլները գործում են անկախ սույն հրահանգով սահմանված ռիսկի պրոֆիլներից: Մաքսային հսկողության իրականացման նպատակով ավտոմատացված ռիսկերի ընտրողականության լրացուցիչ չափանիշները հաստատվում են վերադաս մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

Այն դեպքերում երբ ռիսկի պրոֆիլի նախագիծը կազմվում է ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության կամ ՀՀ վարչապետի, որևէ ոլորտին կամ անձանց

վերաբերվող, հանձնարարականի հիման վրա, ապա ռիսկի աստիճանը գնահատվում է մեկ աստիճան ավելի բարձր քան ստացվել է ռիսկի գնահատման ժամանակ: Տվյալ դեպքում եթե հանձնարարականում նշված ռիսկի աստիճանը ստացվում է 5 ապա ռիսկի պրոֆիլը ներառում է առավելագույն ժամկետային միջոցառումներ և առավելագույն հսկողության տարբերակը:

Սույն բաժնում նշված ռիսկի պրոֆիլների կիրառման ընթացքում «կարմիր» և «դեղին» ուղի ընթացակարգերը նույնպես կատարվում են ավտոմատացված ռիսկի պրոֆիլների կիրառման ընթացակարգով:

Հատուկ ռիսկի պրոֆիլ - կիրառվում է այնպիսի անձանց նկատմամբ, որոնք անմիջապես չեն զբաղվում ապրանքների կամ տրանսպորտային միջոցների ՀՀ մաքսային սահմանով տեղափոխմամբ, բայց աշխատում են մաքսային մարմինների հետ (լիցենզավորված անձանց, մաքսային վճարումների գանձում իրականացնող դրամավարկային կազմակերպություններ և այլն): Տվյալ դեպքում մաքսային մարմինների աշխատանքները նշված անձանց հետ կարգավորվում է ընթացակարգերի վերաբերյալ առանձին հանձնարարականով:

ՌԿՄ-ն վարում է կազմված ռիսկի պրոֆիլների նախագծերի և ռիսկի պրոֆիլների հաշվառման մատյան, որի համարակալած էջերը կարվում և կնքվում են ՀՀ ՊԵԿ քարտուղարության կողմից:

VII Ռիսկերի պրոֆիլների տեղայնացումը և դրանց կիրառումը մաքսային հսկողության ժամանակ

Ռիսկի պրոֆիլի ստորագրման պահից այն տեղադրվում է համակարգչային ցանցում, որը հասանելի է ՀՀ ՊԵԿ պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին և էլեկտրոնային տեսքով ուղարկվում է տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը ավտոմատացված ռիսկերի հետ մեկտեղ տեղայնացնում է նաև այն ռիսկայնության ընտրության չափանիշները, որոնք սահմանված են ռիսկի պրոֆիլով, ապահովում է ռիսկի պրոֆիլով սահմանված ձևակերպումների ընթացքում «կարմիր ուղի» և «դեղին ուղի» ընթացակարգով իրականացումը:

Մաքսային ձևակերպումներ իրականացնող պաշտոնատար անձը մաքսային ձևակերպումների համար ներկայացված փաստաթղթերի ստուգման ավարտից հետո, իսկ նախաբացթողումային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը մաքսային գնման ավարտից հետո՝ պարտադիր իրականացնում են ռիսկի պրոֆիլով սահմանված գործողությունները:

Եթե ռիսկի պրոֆիլով սահմանված միջոցառումների շրջանակում նախատեսվում են այնպիսի գործողություններ, որոնք ենթակա են կատարման մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության, ներքին դիտարկումների կամ այնպիսի ստորաբաժանումների կողմից, որոնք մաքսային հսկողության իրականացման ընթացքում չեն կարող օգտվել համակարգչային

տվյալների բազայից, նախաբացթողումային հսկողություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնատար անձը պարտավոր է մինչև օրենքով սահմանված գործողությունների իրականացումը տեղյակ պահել ռիսկի պրոֆիլով սահմանված ստորաբաժանումների պատասխանատու պաշտոնատար անձանց:

Անկախ ռիսկի պրոֆիլով սահմանված լինելուց «Անընդհատ հսկողության», «Խիստ հսկողության» և «Վտանգավոր» ռիսկի պրոֆիլների վերաբերյալ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը էլեկտրոնային ձևով տեղեկացնում է այն տարածքային հարկային մարմիններին և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող տարածքային ստորաբաժանումներին, որտեղ հաշվառված է անձանց, որի նկատմամբ կազմված է ռիսկի պրոֆիլ (բացառությամբ գաղտնի պրոֆիլների): Այն դեպքերում երբ ռիսկի պրոֆիլը բացված է ապրանքախմբի կամ առանձին երկրներից ներկրվող ապրանքների համար, ապա տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը կազմված ռիսկի պրոֆիլների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ՀՀ ՊԵԿ մաքսային մասով հսկողություն իրականացնող բոլոր ստորաբաժանումներին: Նշված ստորաբաժանումների ցանկը հաստատվում է ՀՀ ՊԵԿ նախագահի կողմից:

Գաղտնի ռիսկի պրոֆիլի հետագա հսկողությունը և կատարված գործողությունների գնահատումը իրականացվում է ՀՀ ՊԵԿ հատուկ բաժնի կողմից:

VIII Ռիսկերի պրոֆիլների կիրառման վերաբերյալ հաշվետվությունը

«Ընդհանուր հսկողության» և «Ընտրանքային հսկողության» ռիսկի պրոֆիլների հսկողության սահմանված ժամկետին հաջորդող օրը տարածաշրջանային մաքսատան, մաքսային կետի մաքսասակագնային և մաքսային ձևակերպումներ իրականացնող ստորաբաժանումները ՌԿՍ են ներկայացնում ստացված ռիսկի պրոֆիլների հետագա ռիսկի պրոֆիլի աստիճանի փոփոխման կամ ժամկետի լրացուցիչ երկարաձգման վերաբերյալ առաջարկություն:

Նախաբացթողումային հսկողություն իրականացնող ստորաբաժանումը «Անընդհատ հսկողության» և «Խիստ հսկողության» ռիսկի պրոֆիլների սահմանված ժամկետին հաջորդող օրը ՌԿՍ է ներկայացնում ստացված ռիսկի պրոֆիլների աստիճանի փոփոխման կամ ժամկետի լրացուցիչ երկարաձգման վերաբերյալ առաջարկություն:

Եթե ռիսկի պրոֆիլը նախատեսում է երկուսից ավելի պատասխանատու ստորաբաժանում, ապա ռիսկի պրոֆիլը տեղայնացնելու պահին որոշվում է այն ստորաբաժանումը, որը պատասխանատու է լինելու նշված ռիսկի պրոֆիլի կատարման համար: Այդ ստորաբաժանումը նշված ռիսկի պրոֆիլի կատարման ընթացքում համակարգում է մնացած ստորաբաժանումների աշխատանքը և լրացուցիչ ժամկետի ավարտի օրվան հաջորդող աշխատանքային օրը

ներկայացնում է հավաք հաշվետվություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը կազմում է տեղեկություն սույն հրահանգով սահմանված կարգով ընտրված կարմիր և դեղին ուղիների քանակների վերաբերյալ ըստ անձանց, նշելով թե, որ դեպքով է ընտրվել ուղին: Յուրաքանչյուր ռիսկի պրոֆիլի ընթացքի և դինամիկայի վերաբերյալ ընդհանուր տեղեկանքները տրամադրվում են էլեկտրոնային տեսքով:

Ռիսկի պրոֆիլի նախագծերի կազմման տիպային կանոնները

I Ընդհանուր դրույթներ

Ռիսկի պրոֆիլի նախագիծում պետք է նկարագրվեն օգտագործվող տեղեկատվության աղբյուրները, տվյալների ընտրության կարգը, տվյալների ընտրության արդյունքները, ստացված տվյալների վերլուծության կարգը, ռիսկի աստիճանի գնահատման կարգը և այլ անհրաժեշտ տվյալներ: Տեղեկատվության մշակման հարմարավետության համար կարելի է օգտագործել ալգորիթմների նկարագրման հավելվածներ՝ ծրագրավորման լեզուների օգտագործմամբ:

II Ընդհանուր տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են տվյալների վերլուծություն անցկացնելու համար

Ռիսկի պրոֆիլի նախագիծը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- օգտագործվող տեղեկատվական ռեսուրսները,
- մաքսային ձևակերպումների և այլ տեղեկությունների ու համեմատության ենթակա ցուցանիշների ցանկը,
- հնարավորության դեպքում սպասվելիք արդյունքի որոշումը (օրինակ՝ ուղղակիորեն մաքսային վճարների կորստի նվազեցում, մաքսային վճարների գումարի հարաբերությունը ռիսկերի նվազեցման ժամանակ կատարված ծախսերին, հայտարարագրվող ապրանքների հավաստիության բարձրացում և այլն),
- ռիսկի աստիճանի որոշման կանոնները:

Տվյալների ընտրության կարգը պետք է կազմված լինի հաջորդական գործողությունների նկարագրությունից, որն անցկացվում է համապատասխան ստորաբաժանման պաշտոնատար անձանց կողմից տեղեկատվության առկա աղբյուրներից անհրաժեշտ և բավարար տեղեկությունների վերլուծության համար:

III Տվյալների վերլուծության կարգի նկարագրում

Տվյալների վերլուծությունը պետք է պարունակի վերլուծության անցկացման ժամանակ գործողությունների հաջորդականությունը, ինչպես նաև վերլուծության համար օգտագործվող ռիսկի աստիճանի սանդղակը՝ տարբերակելով ստացվելիք տվյալների քանակական ցուցանիշները՝ ըստ տարբեր ռիսկային աստիճանի:


Անցկացված գործողությունների արդյունքները կարելի է պատկերել աղյուսակային տեսքով կամ դիագրամների միջոցով (գրաֆիկների տեսքով):

IV. Եզրափակիչ դրույթներ

Մշակված Ռիսկի պրոֆիլի նախագիծը ստորագրում է դրա մշակումը և կազմումը իրականացնող համապատասխան ստորաբաժանման պաշտոնատար անձը:

Կազմված Ռիսկի պրոֆիլի նախագիծը ներկայացվում է ստորաբաժանման ղեկավարին հետագա ընթացքը որոշելու համար:

Ռիսկերի կառավարման համակարգում տեղեկատվության մշակման և տրամադրման տիպային սխեման



Ռիսկի պրոֆիլի նախագիծ N

« » _____ 20 __թ.

Անձանց վերաբերվող տեղեկատվություն

Անվանումը (\$/ա Անուն, Ազգանուն)	ՀՎՀՀ (\$/ա անձնագրի տվյալներ)	Հասցե	Գրանցման SU

Ապրանքատեսակների

ԱՏԳԱԱ ծածկագիրը	Համառոտ նկարագիրը	Չափման միավորը	Հատուկ նշումներ (ծագման, արտահանման, առևտուր անող երկիր և այլն)

Ներկայացված փաստաթղթերում առկա շեղումների կամ կատարված խախտման մանրամասն նկարագիրը

Ռիսկի աստիճանը ըստ կատարված հաշվարկի

Ռիսկի աստիճանի հաշվարկի համար հիմք ընդունված նյութերը (կցված է)

անվանումը	էջերի քանակը
1.	
2.	
3.	
n...	

Առաջարկվող միջոցառումները

Ներկայացնող ստորաբաժանման
պաշտոնատար անձի պաշտոնը

_____ (ստորագրությունը)

_____/_____/ Անուն, ազգանուն

ՌԿՍ ղեկավար

_____ (ստորագրությունը)

_____/_____/ Անուն, ազգանուն

Ռիսկի աստիճանի գնահատման (ռիսկայնության գործակիցների հաշվարկման) կարգը

ՌԿՍ կողմից կազմված տեղեկանքների հիման վրա հաշվարկվում են ռիսկի աստիճանի գործակիցները.

1-ին տեղեկանքում ստացված յուրաքանչյուր տարվա քանակային տվյալների հիման վրա հաշվարկվում է մաքսային գործարքների ծավալային գործակիցը.

$$Գ_1 = \frac{\text{Ծավ}_1}{\text{Ծավ}_{\text{նորմ}}}$$

x100xՈւ_գ

որտեղ՝

Գ₁- անձի կողմից կատարված մաքսային գործարքների ծավալային գործակիցն է,

Ծավ₁ - անձի կողմից հաշվարկի կատարման ընթացիկ տարում և նախորդող 2 տարիների ընթացքում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) մաքսային արժեքների հանրագումարն է,

Ծավ_{նորմ} - ուսումնասիրվող մաքսային ռեժիմի գծով, ըստ դիտարկվող տարիների Ծավ₁ նշված ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) ՀՀ ներմուծված (կամ արտահանված) մաքսային արժեքների հանրագումարն է,

Ու_գ - տարեկան ուղղիչ գործակիցն է:

2-րդ տեղեկանքում ստացված յուրաքանչյուր տարվա քանակային տվյալների հիման վրա հաշվարկվում է անձի հիմնադրի (հիմնադիրների) և (կամ) անձի փոխկապակցված անձանց կողմից վերջին 3 տարիների ընթացքում ներմուծված (կամ արտահանված) ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) ծավալային գործակիցը.

$$Գ_2 = \frac{\text{Ծավ}_2}{\text{Ծավ}_{\text{նորմ}}}$$

x100xՈւ_գ

որտեղ՝

Գ₂- անձի հիմնադրի (հիմնադիրների) և (կամ) անձի փոխկապակցված անձանց կողմից ներմուծված (կամ արտահանված) ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) ընթացիկ տարվա ծավալային գործակիցն է,

Ծավ₂ - անձի հիմնադրի (հիմնադիրների) կողմից ներմուծված (կամ արտահանված) ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) մաքսային արժեքների հանրագումարն է,

Ծավ_{ընդհ} - ուսումնասիրվող մաքսային ռեժիմի գծով, ըստ դիտարկվող տարիների Շավ₂ նշված ապրանքների (ԱՏԳ ԱԱ4 նիշի մակարդակով) ՀՀ ներմուծված (կամ արտահանված) մաքսային արժեքների հանրագումարն է,

Ո₄ - տարեկան ուղղիչ գործակիցն է:

Եթե անձը ունի մի քանի հիմնադիր ապա վերցվում է բոլորի կողմից կատարված գործարքների հանրագումարը:

3-րդ տեղեկանքում ստացված յուրաքանչյուր տարվա քանակային տվյալների հիման վրա հաշվարկվում է տրանսպորտային միջոցների/ուղևորների գործակիցը.

$$Գ_3 = \frac{\text{Ծավ}_3}{S_{\text{ընդհ}}} \times 100 \times \text{Ո}_{4}$$

որտեղ՝

Գ₃- տրանսպորտային միջոցների գործակիցն է,

Ծավ₃ - վերցվում է որպես մեկ խախտում՝ 1,

S_{ընդհ} - խախտման օրը բաց թողնված՝ տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակն է, այն հսկողության տարածքում, որտեղ հայտնաբերվել են խախտումներ, մաքսային հսկողությունից թաքցված ապրանքներ կամ այլ շեղումներ,

- այն դեպքում, երբ խախտումը հայտնաբերվել է մաքսային մուտքի կետից մինչև մաքսային հսկողության գոտին, վերցվում է տվյալ օրը մաքսային կետով տեղափոխված տրանսպորտային միջոցների քանակը,

- եթե խախտումը հայտնաբերվել է ուղևորների մոտ (օդանավով, գնացքով կամ սահմանը ինքնուրույն հատող) ապա վերցվում է տվյալ չվեչթի, գնացքի կամ այլ տրանսպորտային միջոցով ժամանած ուղևորների քանակը,

- եթե հայտնի չէ չվեչթի կամ գնացքով ժամանած ուղևորների քանակը ապա օդանավի համար վերցվում է 50 թիվը, իսկ գնացքի համար 100:

Ո₄ - տարեկան ուղղիչ գործակիցն է:

4-րդ տեղեկանքում ստացված յուրաքանչյուր տարվա քանակային տվյալների հիման վրա հաշվարկվում է թույլ տրված խախտումների ծավալային գործակիցը.

$$Գ_4 = \frac{\text{Ծավ}_4}{\text{Ա}_{\text{ընդհ}}} \times 100 \times \text{Ու}_q$$

որտեղ՝

Գ₄ - գործողության մեջ գտնվող ռիսկի պրոֆիլների ծավալային գործակիցն է,

Ծավ₄ - յուրաքանչյուր տարվա համար վերցվում է որպես մեկ պրոֆիլ՝ 1,

Ա_{ընդհ} - ՀՀ սահմանով տեղափոխված վերը նշված ապրանքների տվյալ խմբի (ԱՏԳ ԱԱ երկու նիշի մակարդակով) համար առկա ռիսկի պրոֆիլների ընդհանուր քանակն է: Եթե տվյալ ժամանակահատվածում չի կիրառվել պրոֆիլներ ապա գործակիցը ընդունվում է 1:

Ու_q-տարեկան ուղղիչ գործակիցն է:

Գործակիցը հաշվարկվում է յուրաքանչյուր ուսումնասիրվող ապրանքային խմբի և տարվա համար առանձին:

5-րդ տեղեկանքում ստացված յուրաքանչյուր տարվա քանակային տվյալների հիման վրա հաշվարկվում է թույլ տրված խախտումների քանակային գործակիցը.

$$Գ_5 = \frac{\text{Ք}_5}{\text{Ք}_{\text{ընդհ}}} \times \text{Ու}_q$$

որտեղ՝

Գ₅ - խախտումների քանակային գործակիցն է,

Ք₅ - ավալ անձի կողմից թույլ տրված խախտումների քանակն է,

Ք_{ընդհ} - խախտումների ընդհանուր քանակն է,

Ու_q - տարեկան ուղղիչ գործակիցն է:

6-րդ տեղեկանքում ապրանքներ ուղարկողի և (կամ) տեղափոխողի կողմից

մաքսային օրենսդրության պահպանման գործակիցը.

$$Գ_6 = \frac{Բ_6}{Բ_{ընդհ}} \times \text{Ու}_q$$

որտեղ՝

$Գ_6$ - ապրանքներ ուղարկողի և (կամ) փոխադրողի խախտումների քանակային գործակիցն է,

$Բ_6$ - վերցվում է 1 թիվը,

$Բ_{ընդհ}$ - ապրանքներ ուղարկող և (կամ) փոխադրող անձի կողմից համապատասխանաբար առաքումների և տեղափոխումների ընդհանուր քանակն է՝ տվյալ մաքսային ռեժիմի գծով,

- յուրաքանչյուր տարվա համար հաշվարկվում է գործակից, առանձին առաքումների գծով և առանձին տեղափոխումների գծով:

- եթե ուղարկողը և (կամ) տեղափոխողը առաջին անգամ են կատարում առաքում/տեղափոխում՝ գործակցի մեծությունը ընդունվում է 1, յուրաքանչյուր տարվա համար

Ու_q - տարեկան ուղղիչ գործակիցն է:

Նշված գործակիցների հաշվարկման ժամանակ Ու_q մեծությունը ընդունվում է հետևյալ չափերով՝

Հաշվարկի կատարմանը նախորդող 3-րդ տարվա համար 0.25,

Հաշվարկի կատարմանը նախորդող 2-րդ տարվա համար 0.5,

Հաշվարկի կատարման տարվա համար 1:

Ռիսկի քանակային գործակիցներին գումարվում է նաև լրացուցիչ միավորներ.

1. եթե անձի վերաբերյալ առկա են տվյալներ մերժված դիմումների մասին՝ յուրաքանչյուր մերժման համար գումարվում է 0,5,

2. եթե առկա են տվյալներ անձի ոչ օրինական գործարքների վերաբերյալ օտարերկրյա պետություններից՝ ապա յուրաքանչյուրի դեպքում լրացուցիչ գումարվում է 1,

3. եթե ստացվում են տվյալներ իրավախախտումների մասին այլ կառավարման մարմիններից, ապա ռիսկի աստիճանի գործակիցը բարձրացվում է 3-ով:

4. եթե ստացվում է ռիսկի նախագիծ որևէ անձի վերաբերյալ, որի համար արդեն իսկ գործում է ռիսկի պրոֆիլ, ապա անկախ ստացված ռիսկի գործակցի

մեծությունից, ռիսկը գնահատվում է 5-րդ աստիճան,

5. եթե կազմվում է ռիսկի նախագիծ առանձին ապրանքների կամ ապրանքների խմբի վերաբերյալ, որոնց համար արդեն իսկ շրջանառության մեջ է գտնվում ռիսկի պրոֆիլ, ապա այդ ռիսկի պրոֆիլի աստիճանը բարձրացվում է 1-ով,

6. եթե գործող ռիսկի պրոֆիլը գնահատված է 5-րդ աստիճան և այդ գծով ստացվում է լրացուցիչ ռիսկի նախագիծ, ապա տվյալ ռիսկը դրվում է անընդհատ հսկողության տակ և ռիսկի պրոֆիլի մասնակից բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են օրական հաշվետվություն:

Հաշվարկվում է յուրաքանչյուր գործակցի գծով դիտարկվող երեք տարիներից յուրաքանչյուրի համար ռիսկի քանակային գնահատականը՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

Գ ₁	Քանակային գնահատական
եթե Գ ₁ մեծությունը 0-ից 10	ՔԳ ₁ = 1
եթե Գ ₁ մեծությունը 10-ից 20	ՔԳ ₁ =2
եթե Գ ₁ մեծությունը 20-ից 30	ՔԳ ₁ =3
եթե Գ ₁ մեծությունը 30-ից 40	ՔԳ ₁ =4
եթե Գ ₁ մեծությունը 40-ից 50	ՔԳ ₁ =5
եթե Գ ₁ մեծությունը 50-ից 60	ՔԳ ₁ =6
եթե Գ ₁ մեծությունը 60-ից 70	ՔԳ ₁ =7
եթե Գ ₁ մեծությունը 70-ից 80	ՔԳ ₁ =8
եթե Գ ₁ մեծությունը 80-ից 90	ՔԳ ₁ =9
եթե Գ ₁ մեծությունը 90-ից 100	ՔԳ ₁ =10

Գ ₂	Քանակային գնահատական
եթե Գ ₂ մեծությունը 0-ից 10	ՔԳ ₂ =1
եթե Գ ₂ մեծությունը 10-ից 20	ՔԳ ₂ =2
եթե Գ ₂ մեծությունը 20-ից 30	ՔԳ ₂ =3
եթե Գ ₂ մեծությունը 30-ից 40	ՔԳ ₂ =4
եթե Գ ₂ մեծությունը 40-ից 50	ՔԳ ₂ =5
եթե Գ ₂ մեծությունը 50-ից 60	ՔԳ ₂ =6
եթե Գ ₂ մեծությունը 60-ից 70	ՔԳ ₂ =7
եթե Գ ₂ մեծությունը 70-ից 80	ՔԳ ₂ =8

Եթե $Գ_2$ մեծությունը 80-ից 90	$ՔԳ_2=9$
Եթե $Գ_2$ մեծությունը 90-ից 100	$ՔԳ_2=10$

$Գ_4$	Քանակային գնահատական
Եթե $Գ_4$ մեծությունը 0-ից 10	$ՔԳ_4=1$
Եթե $Գ_4$ մեծությունը 10-ից 20	$ՔԳ_4=2$
Եթե $Գ_4$ մեծությունը 20-ից 30	$ՔԳ_4=3$
Եթե $Գ_4$ մեծությունը 30-ից 40	$ՔԳ_4=4$
Եթե $Գ_4$ մեծությունը 40-ից 50	$ՔԳ_4=5$
Եթե $Գ_4$ մեծությունը 50-ից 60	$ՔԳ_4=6$
Եթե $Գ_4$ մեծությունը 60-ից 70	$ՔԳ_4=7$
Եթե $Գ_4$ մեծությունը 70-ից 80	$ՔԳ_4=8$
Եթե $Գ_4$ մեծությունը 80-ից 90	$ՔԳ_4=9$
Եթե $Գ_4$ մեծությունը 90-ից 100	$ՔԳ_4=10$

$Գ_3$ $Գ_5$ $Գ_6$ ընդունվում է իր ամբողջ մեծությամբ:

Այնուհետև գումարվում են բոլոր քանակային գործակիցները բոլոր տարիների համար և ստացվում է ռիսկի գնահատման աստիճանը.

$$ՌԱ = ՔԳ_1' + ՔԳ_1'' + ՔԳ_1''' + \dots + ՔԳ_6' + ՔԳ_6'' + ՔԳ_6'''$$

Որտեղ.

$ՔԳ_1'$ -խախտում կատարած տարվա համար հաշվարկված գործակիցն է,

$ՔԳ_1''$ -խախտում կատարած տարվան նախորդող տարվա համար հաշվարկված գործակիցն է,

$ՔԳ_1'''$ -խախտում կատարած տարվան նախորդող երրորդ տարվա համար հաշվարկված գործակիցն է: Ռիսկի աստիճանի գործակիցների հիման վրա կատարվում է ռիսկի գնահատում: Նախատեսվում է ռիսկային 5 աստիճան, որոնք դասակարգվում են հետևյալ չափանիշներից ելնելով.

Ռիսկայնության աստիճան	Անվանումը	ՌԱ չափը
1	Ընդհանուր հսկողության ռիսկ	մինչև 8 նեռարյալ
2	Ընտրանքային հսկողության ռիսկ	9-ից 15 նեռարյալ
3	Անընդհատ հսկողության ռիսկ	16-ից 20 նեռարյալ
4	Խիստ հսկողության ռիսկ	21-ից-25 նեռարյալ
5	Վտանգավոր ռիսկ	26 և բարձր

Եթե ռիսկի աստիճան է հաշվարկվում ապրանքների խմբերի համար ապա գործակիցը հաշվարկվում է վերջին 3 տարիների ընթացքում ներմուծված (կամ արտահանված) ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) ծավալային գործակիցը.

$$Գ_w = \frac{\text{Ծավ}_w}{\text{Ծավ}_{\text{ընդհ}}} \times 100 \times \text{Ու}_q$$

որտեղ՝

$Գ_w$ - ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ապրանքների ընթացիկ տարվա ծավալային գործակիցն է,

Ծավ_w - ՀՀ սահմանով տեղափոխված ապրանքների (ԱՏԳ ԱԱ 6 նիշի մակարդակով) մաքսային արժեքների հանրագումարն է,

$\text{Ծավ}_{\text{ընդհ}}$ - ՀՀ սահմանով տեղափոխված ապրանքների (ԱՏԳ ԱԱ 4 նիշի մակարդակով) մաքսային արժեքների հանրագումարն է,

Ու_q - տարեկան ուղղիչ գործակիցն է:

Ապրանքի ռիսկի աստիճանը որոշվում է հետևյալ չափերով

Ռիսկայնության աստիճան	Անվանումը	Գա չափը
1	Ընդհանուր հսկողության ռիսկ	մինչև 20 նեռաաաա
2	Ընտրանքալին հսկողության ռիսկ	21-ից 40 նեռարյալ
3	Անընդհատ հսկողության ռիսկ	41-ից 60 նեռարյալ
4	Խիստ հսկողության ռիսկ	61-ից-80 նեռարյալ
5	Վտանգավոր ռիսկ	81 և բարձր

Հավելված 5
Հաստատում են՝

« » _____ 20 ____թ.

ՌԻՍԿԻ ՊՐՈՖԻԼ No

հերթական		նախորդ Ռ/Պ հերթական			Ռիսկի նախագծի N			

Կիրառման ռեժիմները

անվանումը	ծածկագիր

Անձի

Անվանումը (\$/ա Անուն, Ազգանուն)	ՀՎՀՀ (\$/ա անձնագրի տվյալներ)	Հասցե	Գրանցման SU

Ապրանքատեսակների

USFԱԱ ծածկագիրը	Համառոտ նկարագիրը	Չափման միավորը	Հատուկ նշումներ (ծագման, արտահանման, առևտուր անող երկիր և այլն)

Ռիսկի պրոֆիլը կիրառվում է մաքսային սահմանով հետևյալ տրանսպորտային միջոցներով ապրանքների տեղափոխման նկատմամբ

Տեսակը	Համառոտ նկարագիրը	Փոխսս դրոշմ

Ռ/Պ տեսակը (աստիճանը)

Կիրառման ժամկետը

ընթացիկ Ռ/Պ	նախորդ Ռ/Պ	սկիզբ	ավարտ

Ռիսկի պրոֆիլի կիրառման պատասխանատու ստորաբաժանումները և կատարման ենթակա միջոցառումների ծածկագրերը.

N	Անվանումը	Միջոցառումների ծածկագիրը*
1,	(Հավաք)	
2,		
3,		
4,		
5,		

*Եթե նախատեսվում է մի քանի միջոցառում ապա նշվում են բոլորը, առանձնացվելով ստորակետով

Կազմող ստորաբաժանման
պաշտոնատար անձի պաշտոնը
հեռախոսի համարը

ՌԿՍ ղեկավար

(ստորագրությունը)

Անուն, ազգանուն

(ստորագրությունը)

Անուն, ազգանուն

ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ

Հ/հ	Անվանում	Օաձկագիր
1	2	3

1. Մաքսային նպատակով անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ստուգում

1	Փաստաթղթերում նշված տեղեկությունների լրիվության ստուգում	101
2	Փաստաթղթերում առկա տեղեկությունների արժանահավատության ստուգում	102
3	Փաստաթղթերը վավերացնող կնիքների և դրոշմակնիքների համադրում մաքսային մարմիններում առսակսս տվյալների հետ	103
4	Փաստաթղթերի վրա ստորագրությունների և համանման այլ տվյալների առկայության ստուգում	104
5	Փաստաթղթային հսկողության ժամանակ մաքսային մարմինների կողմից լրացված տեղեկությունների ճշտում լրացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց հետ	105
Ստուգման առանձնահատկություն՝		
6	- ընդհանուր (101-105)	106
7	- հատուկ-101-105 կետեր՝ մասնագետների ներգրավմամբ	107

2. Տրանսպորտային միջոցների զննում

8	Տրանսպորտային միջոցների տեխնիկական փաստաթղթերի, թափքերի համարների և պետ համարանիշների ստուգում	201
9	Տրանսպորտային միջոցների, բեռնախցիկների կամ հանվող թափքի կապարակնքման և մաքսային ապահովումների կիրառման ստուգում	202
10	Տրանսպորտային միջոցների կշռում (բեռնված այնուհետև առանց բեռի)	203
11	Տրանսպորտային միջոցների բեռնախցիկների, վառելիքի տարողությունների, վարորդի խցիկի և թափքի՝ հատուկ սառըքավորումների (ռենտգենային սարքավորումների, ռադիոակտիվ չափման միջոցների, զննման համար նախատեսված հայելիների և այլ տեխնիկական միջոցների) կիրառմամբ, մանրակրկիտ զննում այդ թվում՝ գծագրերի, լուսանկարների, տեսագրությունների և այլ տեղեկությունների հետ համադրում	204
12	Փոխադրողի, ինչպես նաև միջազգային կոնվենցիաներին միացած փոխադրամիջոցների առաքումների ստուգում, այդ թվում՝ առաքողի կապարակնիքների նույնականացում	205
Տրանսպորտային միջոցների զննման առանձնահատկություն		
13	- ընդհանուր (201-205)	206
14	- հատուկ - 201-205 կետեր՝ մասնագետների ներգրավմամբ	207

3. Ապրանքների գնում

15	Հայերեն նշագրմամբ ապրանքների պիտակավորման, նույն ականաց մ ևն նշանների առկայության ստուգում	301
16	Ապրանքների ծագման երկրի ճշտում	302
17	Ապրանքների նույնականացում, հսյտարարագված տեղեկությունների արժանահավատության ստուգում	303
18	Ապրանքներից վերցված Փորձանմուշների նույնականացում	304
19	Մաքսային մարմինների կողմից գրանցված մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների ստուգում	305
20	Տեխնիկական միջոցներով (ռենտգենային, ռադիոակտիվ չափման և այլ) ապրանքների մանրակրկիտ գնում	306
21	Ապրանքների մանրամասն հաշվառում և կշռում (նետոտ/բրուտոտ)	307
22	Ակցիզային հարկվով ապրանքների մանրամասն հաշվառում ըստ չափման միավորների և ակցիզային դրոշմանիշերի սերիաների և համարների ստուգում	308
<u>Ապրանքների գնման առանձնահատկություն</u>		
23	- ընդհանուր (301-308)	309
24	- հատուկ - 301-308 կետեր՝ մասնագետների ներգրավմամբ	310

4. Ֆիզիկական անձանց նկատմամբ մաքսային հսկողության մեթոդների կիրառում

25	Ֆիզիկական անձանց բանավոր հարցում	401
26	Ֆիզիկական անձանցից գրավոր բացատրությունների ստացում	402
27	Ֆիզիկական անձանց ուղեբեռի և (կամ) միջազգային փոստային առաքումներով ստացված ապրանքների գնում	403
28	Ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների գծով տրվող արտոնությունների կիրառման օրինականության ստուգում	404
29	Ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների՝ այդ թվում անմաքս առևտրի խանութներից գնված և արժույթի գծով սահմանափակումների կիրառման ստուգում	405
30	Անձի քննում	406
<u>Ֆիզիկական անձանց նկատմամբ մաքսային հսկողության առանձնահատկություն</u>		
31	- ընդհանուր (401-406)	407
32	- հատուկ - 401-406 կետեր՝ մասնագետների ներգրավմամբ	408

5. Մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ հսկողություն

33	Մաքսային հսկողության գոտու, մաքսային պահեստների և լիցենզավորված անձի շինությունների և տարածքների գնում	501
34	Մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող անձանց հաշվապահական փաստաթղթերի ստուգում	502

35	Հաշվառման և հաշվետվական համակարգերի կիրառման ստուգում	503
36	Գործարքի կողմ հանդիսացող անձանց մոտ փոխադարձ ստուգում	504

6. Ապրանքների և տրանսպորտային միջոցների հետքացրողումային հսկողություն

37	- ընդհանուր	601
38	- հատուկ - 401-406 կետեր՝ մասնագետների ներգրավմամբ	602

7. Ռիսկերի նվազեցման այլ միջոցներ

39	Ապրանքներից վերցված փորձանմուշների փորձաքննություն	701
40	Տրանսպորտային միջոցների փորձաքննություն	702
41	Փաստաթղթերի փորձաքննություն	703
42	Ապրանքների բեռնաթափում մաքսային պահեստ	704
43	Ծանուցագրի ուղարկում արտահանման երկրից արտահանման հայտարարագրի ներկայացման նպատակով	705
44	Երրոդ անձանցից տեղեկության ստացում (բանկային տեղեկանքներ, վարձակալած պահեստներից բացատրություններ և այլն)	706
45	Արտաքին տնտեսական գործունեության իրականացնողի առևտրային փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, հաշվետվությունների և այլ տեղեկությունների ստուգում	707
46	Մաքսային ուղեկցում	708
47	ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզական ստորաբաժանման ներգրավում	709
48	Կրկնակի մաքսային հսկողություն	710